

մութին ժժ. դարս նայ դպրութեան, Իրանի ներսները նայ ժողովրդի մեջ (1901), Հայ Վաճառականութիւնը Ռուսիայում, Պղնձեղեն ամանների ցուցակը (Էջմ.), Ոսկե խարազանը, Արտաշիր Բարսկան (Յ. Թիրեաքեան Նան) 1906, Ս. Մետրոքի և գրեթե զիստի պատմութեան աղբիւրներն և անոնց քննութիւնը, **Կարնամակ** (Յ. Թիրեաքեան Նան) 1907 :

255. **Ա. Բանվէր**, տպած է 1901-2 տարւոյ «Անանիոս» : — Իսկ ՇԱԲԼ. ՆՕՊԼԻ 1902 ին տպած է **Թող չմեղադրեն** (Արսէն, որ «Անանիոս»ի գրաշարն է) :

256. **Տպ. Հայկական** (IMPRIMERIE ARMÉNIENNE)էն լոյս բնծայուած է **Ս. Չօպանեան**, Հասարական դաստաստներն (1901), **Հայք ի Պօլիս** (1906) :

257. **Էսթ-Սեսթի** տպարանէն (Est-Ouest) 1905 ին լոյս բնծայուած է **Բարիզի Հայ օրերու խնդիրը** :

160ս. **Տիգրան Տօղրամաճեան** \* — Բարիզի մեջ տպարանական իր գործունեութիւնը [1899-1908] տե՛ս 160՞ բուսնամար (Թուրքիոյ բաժին) :

258բ. **Կարապետ Ներսիսեան** (Ch. Nercès). — Ծնած է Զմշկաձագ 1876 ին: Նին. կրթութիւնն աւարտելու տարի մը մնացած՝ կառավարութիւնը տեղւոյն Միացեալ Ընկ.եան վարժարանը կը փակէ և աշակերտք կը ցրուին : Կարապետ կ'անցնի Տրապիզոն, անկէ Պօլիս և շոգենաւային ընկ.եան մը մեջ ծառայելէ վերջ՝ Ս. Արքիթարի խորհուրդով կը մտնէ «Հայրենիք»ի տպարանը. հոն կը սորվի գրաշարութիւն : 1896 ին դէր կ'ունենայ նայ. յեղափոխական գործին մեջ և մահուան կը դատապարտուի, բայց կ'աշտղի փախելի Արքենք օր կը մնայ 5 տարի, գործելով տեղական տպարանի մը մեջ և սորվելով Ֆուսարէն : 1901 ին Բարիզ կ'անցնի ուր տարի մը կը մնայ : 1902 ի վերջերը ժընեվէն կը կանչուի՝ Երզն. Հայ. ուս. Միութեան հրատարակելիք գործերուն համար : Բանի մը տարի կը մնայ Գաշնակցութեան տպարանը, յետոյ հիմնելով առանձին փոքր տպարան մը՝ կը հրատարակէ **Դիտարիւն** և **Գուրբան** հանդէսները : 1906 ի ամբան կը վերադառնայ Բարիզ ուր կ'սկսի հրատարակել **Ն.Օր-Հանդէս** անուն վաղամտիկ երկշարքաբերքը : Բուռն սեր մը կ'արժարժի իր մեջ՝ հոն բանալու համար հայկական տպարան մը ուրիկ կարելի ըլլար լոյս բնծայել գեղարուեստական ճաշակով դրոշմաւոր գործեր : Այդ սերը կ'իրականանայ և Ներսիսեան նոյն խոնարհով կը տպագրէ **Սրբաբար** (1908), «Անանիոս» հանդէսը՝ 1909-11, **Նաղաւ Գովնարան** (1910), **Անտոնինոս և Կլէոպատրա** (ըզմ.



Կ. ԵՐԵՍԵՅԱՆ

Գ. Ֆնտղեան) 1911 և նայլ. տպ. 400ամեակի առթիւ՝ Չօպանեանի պատկ. նոյնպէս **Հայ Էջեր** :

259. **Համադրգային** տպարանէն 1907-8 ին լոյս բնծայուած են **Հոգեւորքի և յոյսի ջանքեր** և **Հայրդիներ** (Սիամանթօ = Ատոմ Եարճանեան) :

260. «**Հն չա կ**»ի տպարանէն լոյս բնծայուած է — բացի համանուն յեղափոխական քերթէն — **Կարլ Մաքս** (1910) :

**ՄԱՐՄԻՔԻԱ** (հին անուամբ ՄԱՐՉԻԼԻԱ) քաղաքին մեջ Ս. անգամ տպարան հիմնողը եղած է բազմաշարքար **Ռսկան վրդ.** իր խումբով 1673 ին : Այս տպարանը